

կալն առ նոսա՝ զմահ ծանուցաներ նոցա եւ զկորուստ. եւ տակաւին գրել զաղտ ի դուռն զիրս ապստամբութեանն փութանային:

2 Ապա իմացեալ սպարապետին Յայոց Վարդանայ, թէ կարի հռչակին իրք ապստամբութեանն, եւ ի կարի հեղգալոյն մեծամեծ գործէին վնասք, խորհուրդ ի մէջ առեալ զաւուրս բազումս եւ ժողովեալ զպատուական եւ պիսկոպոսս եւ զականաւոր երիցունս եւ զաւագ տանուտեարսն Յայոց եւ զսեպուհսն առանձինն,- չէր դեռ եւս յայնմ ժամու կամեցեալ յայտնել զբանսն իւրեանց մարզպանին Յայոց Վասակայ, զիտելով ոչ միայն լոկ վասն որդւոցն եւեթ զկասումն առն ի փրկութեան դարձէն, այլ զառաւել փառասեր աստուածատեաց խորհրդոց նորա ճանաչեալ զորոճմունս՝ - ասեր ցամենեսեան այնուհետեւ յայտնապէս այրն երանելին Վարդան, թէ «Մինչեւ ցե՞րբ հանդուրժեմք թագուցանել զճշմարտութիւնն եւ կորնչիմք. եւ այս համբաւ ելեալ տարածեալ ելից զամենայն տեղիս. այլ յայտնի լուսով զնասցուք իբրեւ ի տուրնջեան եւ որդիս լուսոյ կոչեսցուք»:

3 Մի ոմն յոստանեայ տանէն, որում անուն Չանդաղան, սերմն ժանդ, որդի անաւրէնութեան, որ բազում եւ անապաշխար չար գործեալ էր ի կեանս իւրում՝ լսեր յոմանց զխորհեալսն¹ Յայոց եւ երթեալ վաղվաղակի գուշակեր² նմանւոյն իւրում Վասակայ: 4 Որոյ բանից իրագգած եղեալ նենգաւոր քսուին աւագ նախարարքն Յայոց՝ կալեալ զնա ի գեաւղն որ կոչի Արծակ՝ տարեալ կապեցին ի միւսում եւս ի գեաւղ յանուանեալ Բերդկունս, ի նմին Բագրեւանդ զաւառի. զոր եւ ոչ յետ բազում աւուրց ըստ արժանի գործոց իւրոց անաւրէնութեանց քարկոծեալ սատակեցին:

5 Եւ ապա յայտնապէս ժողովեալ միաբանութեամբ ամենայն տանուտեարքն Յայոց եւ սեպուհք, եպիսկոպոսաւքն եւ բազմութեամբ ամենայն բահանայիւք եւ ժողովրդովք, առ երանելի սպարապետն Յայոց տերն Մամիկոնէից Վարդան, եւ հանդերձ նովաւ մտին թափ ըստ գրոց հրամանին³ բոլորեթեան առ իշխանն Սիւնեաց Վասակ, առ մարզպանն Յայոց. եւ յայտնեալ նմա միաբան ամենեցուն զխորհուրդն, թեպէտ ջանայր յապաղել նա⁴, մի՞ վասն որդւոցն իւրոց, որք ի դրանն էին, եւ դարձեալ՝ զի եւ կեանքն իւր⁵ իսկ ի իննամա չարին միտէին հանապազ՝ ոչ ինչ այնուհետեւ թոյլ տային սայթաքել խորհրդոց նորա այսր անդր. այլ թեպէտ եւ ոչ կամաւ, սակայն ի հարկէ յանձն առեալ միաբաներ ընդ նոսա: 6 Բերել դարձեալ հրամայէին նախարարքն Յայոց սուրբ եպիսկոպոսացն եւ երիցանցն՝ զԱւետարան ուխտին

1 ՏՏ. զխորհեալսն

2 ԲԳտ. վաղվաղակի պատմեր Ատ. չիք գուշակեր

3 Ձ. զգրոյ հրամանին. Ատ. զգրոց հրամանին

4 ՁԱտ. յապաղել նմա

5 Թուի ուղղելի կամքն իւր